# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի ընդունման**

**Գործող իրավակարգավորումները**

Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքը թույլ է տալիս, որ Ազգային ժողովի կողմից գործուղման մեկնած Ազգային ժողովի պատգամավորները Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում, Ազգային ժողովի խորհրդում և Ազգային ժողովի նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ, նախապես, մինչև գործուղման մեկնելը, փակ ծրարով, համապատասխան ընթացակարգերով թողնեն իրենց դիրքորոշման վերաբերյալ տեղեկատվություն՝ քննարկվող նախագծերի քվեարկության վերաբերյալ, որը հաշվի է առնվում համապատասխան քվեարկությունների ժամանակ:

Հարկ է նկատել, որ Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ Սահմանադրական օրենքը այդ հնարավորությունը չի տալիս ՀՀ Ազգային ժողովի կողմից գործուղման մեջ գտնվող պատգամավորներին՝ գաղտնի կամ անվանական քվեարկությունների ժամանակ:

Միաժամանակ գործողման մեջ գտնող պատգամավորները կարող են նախապես քվեարկել միայն օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ, սակայն Ազգային ժողովի կանոնակարգը հնարավորություն է տալիս ինչպես ԱԺ մշտական հանձնաժողովների, այնպես էլ ԱԺ խորհրդի և ԱԺ նիստերի օրակարգերում ընդգրկել լրացուցիչ հարցեր, 24 ժամվա ռեժիմում կազմակերպել նոր քվեարկություններ, պատգամավորի գործուղման ժամանակահատվածում հրավիրել արտահերթ նիստեր, որոնց քվեարկություններին գործուղման մեջ գտնվող պատգամավորը

գործնականում այլևս մասնակցել չի կարող: Ստացվում է, որ նույն ժամանակահատվածում պատգամավորը կարող է մասնակցել մի հարցի քվեակությանը՝ զրկված լինելով մեկ այլ հարցի քվեարկությանը մասնակից լինելու հնարավորությունից:

**Առաջարկվող փոփոխությունների էությունը**

Ներկայացված նախագծով առաջարկվում է ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ Սահմանադրական օրենքում ուժը կորցրած ճանաչել այն դրույթները, որոնք կարգավորում են Ազգային ժողովի կողմից գործուղման մեջ գտնվող պատգամավորներին որևէ եղանակով մասնակցելու Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների, Ազգային ժողովի խորհրդի նիստերին և Ազգային ժողովի նիստերին բաց քվեարկություններին՝ պարտադիր համարելով պատգամավորի անմիջական մասնակցությունը:

**Փոփոխությունների ենթադրյալ արդյունքները**

Առաջարկվող փոփոխության արդյունքում հնարավոր կլինի ապահովել առավել պատասխանատու մոտեցում պատգամավորական գործունեություն իրականացնելու և ներկայացուցչական մանդատը իրացներլու համար, այդ թվում՝ քվեարկություններին մասնակցելու առումով:

Եթե գաղտնի կամ անվանական քվեարկությունների ժամանակ Ազգային ժողովի պատգամավորի ներկայությունը պարտադիր է, ապա այն պետք է պարտադիր լինի նաև բաց քվեարկությունների ժամանակ: Անկախ քեվարկության ձևից և եղանակից՝ պատգամավորն Ազգային ժողովում որոշումների ընդունման գործընթացին մասնակցում է քվեարկության միջոցով, հետևաբար միայն բաց քվեարկությանը մասնակցելուն տրվող առավելությունը չունի որևէ հիմնավորվածություն:

Ազգային ժողովի պատգամավորը քվեարկության միջոցով արտահայտում է իր վերջնական դիրքորոշումը, որը կարող է փոփոխությունների ենթարկվել ԱԺ մշտական հանձնաժողովներում, ԱԺ խորհրդում կամ ԱԺ նիստում ծավալվող քննարկումների, հարցուպատասխանի, մտքերի փոխանակման ժամանակ: Այսինքն՝ ծանոթանալով նախագծերին, դրա հետ ներկայացված փաստաթղթերին և այլն, Ազգային ժողովի պատգամավորը կարող է նախապես ունենալ մի կարծիք, որը գործուղման մեկնելուց առաջ, ներկա իրավակարգավորումներով, փակ ծրարներով հանձնում է համապատասխան պաշտոնատար անձին, սակայն, հետագայում այն հնարավոր է վերանայվի՝ նիստերի ընթացքում տեղի ունեցող քննարկումների արդյունքում: Այդ դեպքում պաշտոնապես արձամագրվում է պատգամավորի ոչ թե վերջնական, այլ նախնական կարծիքը, ինչը ունի ֆունկցիոնալ նշանակություն և կարող է էապես ազդել որոշումների ընդունման գործընթացի վրա: Նախնական դիրքորոշումը՝ որպես քվեարկություն մատուցելը կարող է նսեմացնել Ազգային ժողովում տեղի ունեցող քննարկումների՝ հարցուպատասխանի, մտքերի փոխանակման կարևորությունը:

ԱԺ մշտական հանձնաժողովների, ԱԺ խորհրդի և ԱԺ հերթական և արտահերթ նիստերից Ազգային ժողովի պատգամավորները կարող են բացակայել ոչ միայն գործուղման մեջ գտնվելու, այլև այլ պատճառներով, մասնավորապես՝ անձնական հիմնավոր պատճառներով, ինչպիսիք կարող են լինել հիվանդությունը, արտակարգ դեպքերը, քաղաքացիների հետ հրատապ հանդիպումները, ընտանեկան հանգամանքները, Ազգային ժողովից դուրս տեղի ունեցող ոչ պակաս կարևորություն ունեցող միջոցառումները և այլն, որոնց դեպքերում Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքը թույլ չի տալիս պատգամավորներին մասնակցել քվեարկություններին նույն ընթացակարգերով, ինչպես

գործողման մեջ գտնվող պատգամավորներին՝ առաջացնելով տարբերակված պայմաններ:

Ժողովրդի կողմից ստացված մանդատը անհրաժեշտ է իրացնել՝ անշեղորեն պահպանելով պառլամենտարիզմի ոգին, ինչն էլ ենթադրում է ունենալ արդյունավետ մասնակցություն օրենսդրական նախաձեռնությունների, օրենքների նախագծերի քննարկմանը, այլ ոչ թե դիրքորոշումը արտահայտել՝ հաշվի չառնելով գործընկերների և ընդդիմախոսների կարծիքները:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ Ազգային ժողովի նիստերին, ԱԺ մշտական հանձնաժողովի նիստերին և ԱԺ խորհրդի նսիտերին պատգամավորների (հանձնաժողովներում և խորհրդում ընդգրկված համապատասխան պատգամավորների) ներկայությունը Ազգային ժողովի կանոնակարգ ՀՀ սահմանադրական օրենքով պարտադիր է, իսկ գործուղումների գնալը պարտադիր չէ և կարող է կազմակերպվել ըստ հայեցողության և նպատակահարմարության:

ՀՀ ԱԺ պատգամավոր Էդգար Ղազարյան

